ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2005 ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

«ՀՀ պետական պարտքի 2005թ. առաջին կիսամյակի հաշվետվությունը» հրատարակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ - գլխավոր գանձապետ Ա. Ջանջուղազյանի և պետական պարտքի կառավարման վարչության պետ Ա. Մարգարյանի ընդհանուր խմբագրությամբ:

Նյութերը կազմել և թարգմանել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության աշխատակիցներ Հ. Կարապետյանը, Ա. Մարությանը, Ս. Մկրտչյանը, Ա. Համբարձումյանը, Ա. Եգանյանը, Շ. Մկրտչյանը, Ս. Խանվելյանը, Լ. Հովականյանը, Ա. Օհանյանը, Ս. Իսրայելյանը:

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2005թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 552.9 մլրդ դրամ կամ 1,250.0 մլն ԱՄՆ դոլար:

	31.12.2002թ.		30.06.2003թ.		31.12.2003թ.		30.06.2004թ.		31.12.2004թ.		30.06.2005թ.	
	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար	մլրդ դրամ	մլն ԱՄՆ դոլար
Պետական պարտք	*640.6*	*1,095.3*	*671.7*	*1,148.6*	*664.4*	*1,173.9*	*617.2*	*1,154.7*	*621.1*	*1,278.4*	*552.9*	*1,250.0*
այդ թվում												
Ներքին պարտք	*40.8*	*69.8*	*41.0*	*70.2*	*43.1*	*76.2*	*45.0*	*84.2*	*46.4*	*95.5*	*59.9*	*135.5*
Արտաքին պարտք	*599.8*	*1,025.5*	*630.6*	*1,078.4*	*621.3*	*1,097.7*	*572.2*	*1,070.5*	*574.7*	*1,182.9*	*493.0*	*1,114.5*

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Օգտագործված հապավումներ

ՆՊՊ-ներքին պետական պարտք

ՊՊ- պետական պարտատոմսեր

ՊԿՊ-պետական պարտատոմսեր

ՄԺՊ-միջին ժամկետայնության պատատոմսեր

ԵՊ-երկարաժամկետ պարտատոմսեր

2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքը անվանական արժեքով կազմել է 59,923.5 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր (ՊԿՊ)՝ 16,477.50 մլն դրամ, միջին ժամկետայնության պարտատոմսեր (ՄԺՊ)՝ 37,745.99 մլն դրամ և երկարաժամկետ պարտատոմսեր (ԵՊ)՝ 5,700.00 մլն.դրամ
- պետական պարտատոմսերի հաշվին պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը՝ 14,016.5 մլն դրամ,
- ՆՊՊ միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.3087 %,
- ՆՊՊ պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 771 օր (ՊԿՊ-եր՝ 115 օր, ՄԺՊ-եր՝ 646 օր և ԵՊ-եր՝ 3027օր):

Աղյուսակ 1

2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

	առ 01.07.2004թ.	առ 01.01.2005թ.	առ 01.07.2005թ.
Ներքին պետական պարտքը *(մլն դրամ)*	45,030.01	46,406.08	59.923.49
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	17,059.31	9.200.00	16.477.50
միջին ժամկետ. պարտատոմսեր	27,970.70	34.506.08	37.745.99
երկարաժամկետ պարտատոմսեր	-	2.700.00	5.700.00
ՆՊՊ-ի ժամկետայնությունը (օր)	484	754	771
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	135	129	115
միջին ժամկետ. պարտատոմսեր	698	727	646
երկարաժամկետ պարտատոմսեր	-	2982	3027

ՆՊՊ-ի եկամտաբերությունը (%)	11.2428	9.0068	7.3087
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	8.8750	5.6375	4.4678
միջին ժամկետ. պարտատոմսեր	12.6871	9.8856	8. 3947
երկարաժամկետ պարտատոմսեր	-	9.2551	8.3296

Գծապատկեր 1

2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2005 թվականի առաջին կիսամյակում տեղի է ունեցել պետական պարտատոմսերի 29 թողարկում, որից 18-ը ՊԿՊ-երի, 9-ը՝ ՄԺՊ-երի, իսկ 2-ը՝ ԵՊ-րի: Թողարկումների ընդհանուր ծավալը կազմել է 29.60 մլրդ դրամ, որից տեղաբաշխվել է 28.21 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալում ՊԿՊ-երը կազմել են 15.5 մլրդ դրամ (52.4%), ՄԺՊ-երը՝ 11.1 մլրդ դրամ (37.5%), իսկ ԵՊ-երը՝ 3.0 մլրդ դրամ (10.1%): ՊԿՊ-երի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 861.1 մլն դրամ, ՄԺՊ-երինը՝ 1,233.3 մլն դրամ, իսկ ԵՊ-երինը՝ 1,500.0 մլն դրամ: ՊԿՊ-ների մեծածավալ թողարկումները կատարվել են ՀՀ ԿԲ-ի հետ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման շրջանակներում, դրանց զգալի մասը մարվելու են 2005թ. ընթացքում և, ըստ էության, տարեվերջին ՆՊՊ-ի ծավալների աճի չեն հանգեցնելու:

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.20 անգամ և կազմել 65.0 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 790 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 5,0932% (տես աղ. 2): Թողարկման առավելագույն ժամկետայնությունը եղել է 10 տարի, նվազագույնը՝ 13 շաբաթ:

Աղյուսակ 2

2005 թվականի առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշները ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն (%)	Առավելագույն եկամտաբերություն (%)	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Տեղաբաշխման միջին կշռված ժամկետ (օր)
Հունվար	3.5000	5.9800	5.3206	457
Փետրվար	3.9800	5.9888	4.7097	670
Մարտ	3.5000	7.0000	4.7784	1037
Ապրիլ	3.4000	5.8000	4.5754	492
Մայիս	4.4486	6.9900	5.3347	599
Հունիս	4.5120	8.2400	6.0999	1452
I կիսամյակ	3.4000	8.2400	5.0932	790

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի 97.75%-ը (63.542.2 մլն դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, 1.91%-ը (1,241.7 մլն դրամ)՝ ներդրողների հաշվին, իսկ ԳՊ-ն՝ 0.34% (221. 9 մլն դրամ):

Աղյուսակ 3

2005թվականի առաջին կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած պարտատոմսերի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	72.36	26.42	1.23	100.00
Փետրվար	46.42	53.55	0.03	100.00
Մարտ	59.42	39.98	0.61	100.00
Ապրիլ	27.58	72.02	0.40	100.00
Մայիս	38.19	61.49	0.32	100.00
Հունիս	52.01	45.68	2.30	100.00
I կիսամյակ	66.86	32.29	0.85	100.00

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2005 թվականի հունիսի 24-ի դրությամբ



Ներդրողների կառուցվածքում առաջին անգամ ոչ ռեզիդենտների տեսակարար կշիռը նվազել է հասնելով 0%-ի (բացարձակ մեծությամբ ոչ ռեզիդենտների հաշվին առկա է ընդամենը 130,000 դրամ ծավալով պարտատոմս):

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2005թ. առաջին կիսամյակի ընթացքում երկրորդային շուկայում կատարված գործարքներն ունեն հետևյալ տեսքը՝

- Կատարվել է 521 գործարք
- Գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 36,445.5մլն. դրամ, որից՝
  1. Ընդամենը ՊԿՊ՝ 11,746.9 մլն. դրամ
  2. Ընդամենը ՄԺՊ՝ 20,306.9 մլն. դրամ
  3. Ընդամենը ԵՊ՝ 4,391.7 մլն. դրամ
- ԿԲ-ի կողմից կատարվել են 1,287.5 մլն. դրամ ծավալով առքի գործարքներ, ամբողջությամբ ՄԺՊ-եր
- Առևտրային բանկերի կողմից՝ 35,158.0 մլն. դրամ, որից
  1. Ընդամենը ՊԿՊ՝ 11,746.9 մլն. դրամ
  2. Ընդամենը ՄԺՊ՝ 19,019.4մլն. դրամ
  3. Ընդամենը ԵՊ՝ 4,391.7 մլն. դրամ
- Միջին կշռված եկամտաբերությունը՝ 5.12%
- Միջին կշռված ժամկետայնությունը՝ 1183օր: Միջին կշռված ժամկետայնությունն առանց ԿԲ գործարքների կազմում է 1175օր:
- Միջին օրական ծավալը՝ 291.6 մլն. դրամ
- Գործարքների միջին օրական քանակը՝ 4:

Գծապատկեր 3

2005 թվականի առաջին կիսամյակում կատարված գործարքների ծավալները և եկամտաբերությունը ըստ ամիսների



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս
ծավալ (միլիոն դրամ)	3,344.7	3,910.0	6,490.8	9,063.0	6,621.4	7,015.7
միջին կշռված եկամտ.	4.5185	5.5251	4.9099	5.0446	4.8820	5.6831

Գծապատկեր 4

2005 թվականի առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնությունները ըստ ժամկետայնության



	1-91 օր	92-182օր	183-364 օր	1-3 տարի	3-4 տարի	4-5 տարի	6 և ավել տարի
գործ. ծավալ (միլիոն դրամ)	3,821.1	4,772.0	3,292.2	6,762.9	5,836.2	6,281.7	4,391.9
եկամտաբերություն (%)	3.48	3.95	3.86	5.37	5.12	5.88	7.45

Գծապատկեր 5

ՊԿՊ-ների, ՄԺՊ-ների և ԵՊ-ների տեսակարար կշիռները կատարված գործարքների ծավալում



Գծապատկեր 6

2005 թվականի առաջին կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2005թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված 18 թողարկումներից 16-ին,
- ներդրման ծավալը կազմել է 221.9 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 12.3 մլն. դրամ,
- մարվել է 197.3 մլն. դրամի պարտատոմս,
- տեղաբաշխված ՊԿՊ-երի 1.43 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով,
- դիլեր բանկեր է փոխանցվել 13.7 մլն. դրամի պարտատոմս,
- ընդամենը շրջանառության մեջ է եղել 205.1 մլն. դրամի պարտատոմս (տես գծ. 7),

Գծապատկեր 7

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը
2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ

(մլն. դրամ)



- դեպո հաշիվների քանակը կազմել է 675, որոնցից 2-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 6),

Գծապատկեր 8

Դեպո հաշիվների դինամիկան 2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ



	Հունվար-05	Փետրվար-05	Մարտ-05	Ապրիլ-05	Մայիս-05	Հունիս-05
Դեպո հաշիվների քանակը	673	673	673	674	674	675

- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 126 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 6 մլն. դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 4.4 մլն. դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 2.8 թողարկման:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2005թ-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործառնությունները

(մլն դրամ)

	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Տեղաբաշխում	Տեղաբաշխված կշիռը (%)	Աճուրդների քանակը	Մեկ աճուրդի ներդրման միջին ծավալը
1-13 շաբաթ	0	0	0	8.4	3.77	1	8.4
14-26 շաբաթ	31.0	0.5	31.5	171.7	77.38	7	24.5
27-39 շաբաթ	0	0	0	13.0	5.84	6	2.2
40-52 շաբաթ	156.2	9.6	165.8	28.9	13.01	4	7.2
Ընդամենը	187.2	10.1	197.3	222.0	100.00	18	12.3

Աղյուսակ 5

2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ ԳՊ-ի միջոցով ձեռք բերված և շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-եր

(մլն. դրամ)

	1-13 շաբաթ	14-26 շաբաթ	27-39 շաբաթ	40-52 շաբաթ	

Անվանական արժեք	8.4	138.6	13.0	45.2	205.2
Գնման գին	8.3	136.1	12.6	43.3	200.3
Սպասարկում	0.8	2.5	0.3	1.8	4.7
Միջին Եկամտաբերություն(%)	3.77	4.61	4.01	4.33	4.48
Կշիռը(%)	4.08	67.58	6.32	22.03	100.00

Գծապատկեր 9

Ներդրումներն ըստ ժամկետայնության 2005թ.առաջին կիսամյակի ընթացքում

(մլն. դրամ)



	1-13 շաբաթ	14-26 շաբաթ	27-39շաբաթ	40-52 շաբաթ	Ընդամենը
Թողարկման ծավալ 10 %	100.0	650.0	550.0	250.0	1,550.0
Տեղաբաշխում	8.4	171.7	13.0	28.9	221.9
Կշիռը (%)	8.4	26.4	2.4	11.6	14.3

ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2005 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,114.5 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ Կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները՝ 921.5 մլն ԱՄՆ դոլար (կամ ընդհանուր պարտքի 82.7%),
- ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 193.0 մլն ԱՄՆ դոլար(կամ ընդհանուր պարտքի 17.3%):

2004 թվականի դեկտեմբերի 31-ի համեմատությամբ հանրապետության արտաքին պետական պարտքի ծավալը նվազել է 5.8 տոկոսով կամ մոտ 68 մլն ԱՄՆ դոլարով: Նշված փաստը պայմանավորված է եղել բացառապես ԱՄՆ դոլարի նկատմամբ Հայաստանի արտաքին վարկային զամբյուղը կազմող հիմնական արժույթների փոխարժեքների նվազմամբ[1]:

Գծապատկեր 10

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ տրամադրման արժույթի

2005թ. հունիսի 30-ի դրությամբ



2005 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով կատարվել են հետևյալ գործառնությունները.

[1] 31.12.2004թ. դրությամբ 1SDR=1.55301USD, 1EUR =1.3621 USD
30.06.2005թ. դրությամբ 1SDR=1.45661USD, 1EUR =1.2092 USD

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների ստացումները 2005թ. առաջին կիսամյակի ընթացքում

(մլն ԱՄՆ դոլար)

	Ստացում	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**27.05**	**28.09**	**22.93**	**5.16**
այդ թվում՝				
1. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**22.22**	**11.19**	**6.57**	**4.62**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*18.17*	*9.25*	*5.42*	*3.83*
Համաշխարհային Բանկ	17.94	4.73	1.45	3.29
որից՝				
Միջազգային Զարգացման Գործակալություն	17.94	4.26	1.13	3.14
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	0.23	0.16	-	0.16
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	-	4.33	3.97	0.37
Եվրամիության	-	0.03	-	0.03
Երկկողմանի վարկատուներ	*4.06*	*1.94*	*1.15*	*0.79*
Ռուսաստանի Դաշնություն	-	-	-	-
ԱՄՆ	-	1.68	1.15	0.53
Գերմանիա (KfW)	4.06	0.24	-	0.24
Ֆրանսիա	-	0.02	-	0.02
Ճապոնիա	-	0.01	-	0.01
2. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**4.83**	**16.90**	**16.36**	**0.54**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*4.83*	*16.90*	*16.36*	*0.54*
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	4.83	16.90	16.36	0.54

2005թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 90.2%-ը կազմել են բազմակողմանի վարկատուներից ստացված վարկային

միջոցները, իսկ մնացած 9.8%-ը՝ երկկողմանի վարկատուների կողմից տրամադրված վարկերը (տես գծապատկեր 11):

Գծապատկեր 11

ՀՀ վարկատուների կառուցվածքը 2005թ. հունիսի 30-ի դրությամբ



2005թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին վարկային զամբյուղը համալրվել է հետևյալ երկու նոր վարկային համաձայնագրերով.

- **Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագիր** (վարկատու՝ *Միջազգային Զարգացման Գործակալություն*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ **13.0 մլն SDR**,
- **Երևանի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման վարկային ծրագիր** (վարկատու՝ *Միջազգային Համագործակցության Ճապոնական Բանկ*, վարկառու՝ *ՀՀ կառավարություն*): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ **15.918 մլրդ JPY:**